ԲՈԼՈՐԸ.– (Գնում են։)

ՈՒՍՏԻԱՆ.– Ինչի՞ կանչեցիր։

ՆԱՁԱՐ.– Ոչինչ, հենց էնպէս, քեֆի համար։ (Ծիրանին դրստելով եւ իրան շտկռտելով) էո՜ֆ, տեսնում ե՞ս, Ուստիան, ոնց են հոլի պէս պտտւում չորս կողմս։ (Ուստիանի ուտելը դիտելով) Լա՛ւ անուշ արա, Ուստիան, շա՛տ կա, վա՛խիլ մի։ Մի քիչ էլ շեբդ ածա. բաղչում չարազ կանես, լաւ Բաղդադու խուրմա կա մէջը։

ՈՒՍՏԻԱՆ.– Է, ասել է, էլ տուն չենք գնա։

ՆԱՁԱՐ.– Տո՞ւն։ Ինչ հօրս ցաւն եմ թողել տանը։ Տունը պրծա՛ւ։ Հա՛յ գիտի տուն։ Երազը նա էր։ Իսկը որ երազ։

ՍԵՆԵԿԱՊԵՏ.– (Ներս մտնելով նաժիշտների հետ Ուստիանի զգեստներով) Եթէ թագուհին կբարեհաճի զգեստաւորուել, նաժիշտները պատրաստ են։

ՆԱՁԱՐ.– (Տնտղելով նրան եւ ծամածռելով) Բե՛, բե՛, բե՛, բե՛, բե՛, բե՛…

ՍԵՆԵԿԱՊԵՏ.– Ուրեմն ի՞նչ կհրամայես կարգագրութեան մասին, Օրէնսդիր շնորհաց։

ՆԱՁԱՐ.– (Լեզու հանելով եւ ծամածռելով) Բէ՛, բէ՛, բէ՛, բէ … լեզուիդ տուր… Ի՞նչ ես ուզում։

ՍԵՆԵԿԱՊԵՏ.– Թագուհու շորերը պատրաստ են, տէ՛ր։

ՆԱՁԱՐ.– Դէ, էդպէս ասա, իշի կտոր։ (Ուստիանին) Դու շորերդ հագի, ես էլ մի բարձրանամ այվանը, աչք ածեմ տէրութեան, տեսնեմ ամեն բան կարգի՞ն է, որ կպրծընես իմաց արա, գնանք բաղչա։ Իշխան Սաքո՛, դրօշակն առ։ (Սաքոն բռնում է դրօշակը) Ջաբադա՛ր, Խազնադար։

ԽԱՁՆԱԴԱՐ, ՋԱԲԱԴԱՐ.– (Ներս ընկնելով) Հրամայի, թագաւորն ապրած կենա։

ՆԱՁԱՐ.– Առաջ ընկէք, գնանք տեսնենք տէրութեան գործերը ի՞նչ հալի են։ (Ջաբադարն ու Խազնադարը մէջքները կռացած՝ առաջ են ընկնում։ Նազարը հետեւամ է նրանց եւ դուրս ելնելով դիմացի դռնից, բարձրանում է ներսից երեւացող պատշգամբը եւ սկսում է դիտել շուրջը։ Սաքոն նրա մօտ բռնում է դրօշակը։ Իսկ Ջաբադարն ու Խազնադարը ծածկւում են պատի այն կողմը։)

ՈՒՍՏԻԱՆ.– (Վեր է կենում, որ գնա, բայց մի բան մտաբերելով կանգ է առնում եւ դառնում Սենեկապետին) Ի՞նչ եմ ասում, գեա՛դա, լսո՞ւմ ես։

ՍԵՆԵԿԱՊԵՏ.– Գերապատիկ, այո՛։ Արթուն է ականջս լսելու զոյգն հրամանիդ։